*Հավելված N 3*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

*Օրինակելի ձև*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ ստորև ներկայացնում է իր կարիքների համար թատերական բեմի մեխանիզացիայի տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված N ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/01 պայմանագրում 2021 թվականի փետրվարի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող` երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 Ֆինանսական միջոցների հատկացում
առաջացած պատճառի մանրամասն բովանդակությունը

Փոփոխության նկարագրություն N 1 և N 2 հավելվածների հաստատում:
կատարված փոփոխության մանրամասն բովանդակությունը

Փոփոխության հիմնավորում ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ
փոփոխության կատարման հիմնավորման մանրամասն բովանդակությունը

Պատվիրատու` ***«Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ***

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

## 25.12.2020թ. կնքված N «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/01» գնման պայմանագրի

ք. Երևան «12» փետրվարի 2021թ.

<<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն>> ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Կ. Օրբելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Ավե Մար» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, հիմք ընդունելով 25.12.2020թ. կնքված N «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/01» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13-րդ կետը , կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հիմք ընդունելով <<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն>> ՊՈԱԿ-ի 2021թ. հաստատված նախահաշիվը՝ Կողմերը համաձայնում և հաստատում են վերոնշյալ Պայմանագրի N 1 և N 2 Հավելվածները:

### *2. Այլ պայմաններ*

1.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

1.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

1.3 Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են 4 **էջից**, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### *3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| <<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն>> ՊՈԱԿ<br>ք. Երևան, Թումանյան 54<br>ՀՀ ՖՆ թիվ 1 գանձապետական բաժանմունք<br>900018001306<br>ՀՎՀՀ 02510673<br>Տնօրեն՝ Կ. Օրբելյան | <<Ավե Մար>> ՍՊԸ<br>Ք. Երևան, Սայաթ-Նովա 4, բն. 82<br>Հայբիզնեսբանկ ՓԲԸ<br>ՀՀ 1150000316390100<br>ՀՎՀՀ 02554691<br>Տնօրեն՝ Ա. Խաչատրյան |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված N 1
« 12» փետրվարի 2021թ. կնքված
N 1 Համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71631100 | Առկա են դեկորացիոն, սոֆիտային, անհատական ամբարձիչներ, որոնք կառավարվում են էլեկտրոնային հեռակառավարման վահանակով: Կենտրոնական բեմի տարածքում աշխատում են 50 հատ դեկորացիոն ամբարձիչներ: Դեկորացիոն ամբարձիչը իրենից ներկայացնում է 60 մմ տրամագիծ ունեցող խողովակ / հեռագայում շտանգետ/, որի երկարությունն է 19200 մմ, աշխատանքային բարձրացման երկարությունը կազմում է 28000 մմ: Ծանրածողը / շտանգան/ կախված է 5 կետում, 7 մմ տրամագիծ ունեցող ճոպաններով: Ծանրածողը կապված է ճոպանա-անիվային համակարգի միջոցով հակակշռի և կարապիկի հետ: Ծանրածողի շարժումը իրականացվում է կարապիկի աշխատանքով: Կարիպիկի մեխանիզմի աշխատանքը ապահովվում է 5.5 կվտ հզորությամբ էլ. շարժիչի և ռեդուկտորի և էնկոդերի միջոցով: Կարապիկի մեխանիզմը ղեկավարվում է էլ. վահանակով: Մնացած շտանգետների մեխանիզմները նույնն են, բացառությամբ շարժիչների հզորությամբ և ճոպանների տրամագծի:<br><br>• Անհատական ամբարձիչների մեխանիզմները տեղադրված են ճոպանա-անիվային հարթակի վրա, թվով 6 հատ են / կալսանիկ/:<br>• Ամբարձիչների մեխանիզմները գտնվում են 6-ից 11 – րդ հարկերի, բեմի երկու կողմերի անցումներում: Ճոպանա – անիվային համակարգը գտնվում է 12-րդ հարկում, իսկ հակակշիռների համակարգը՝ 4-րդ և 6-րդ հարկերում:<br>• Կենտրոնական և կողային բեմերի վարագույրները կախված են մետաղյա կառնիզներից, որոնց շարժումները կատարվում են կարապիկներով, ձեռքի աշխատանքով: Վարագույրների բացումը և փակումը կատարվում են էլ. կարապիկների միջոցով, որոնք տեղադրված են կառնիզների վրա:<br>• Կողային երկու բեմերի տարածքում ներկա են ևս 4 հատ կարապիկի մեխանիզմ:<br>• Կենտրոնական բեմի վրա կա 6 սոֆիտներ և մեկական սոֆիտ կողային բեմերում: Սոֆիտների կախիչները երկկողմանի են, հակակշիռները պայուսատ տիպի:<br>• Հեռակառավարման վահանակը թույլ է տալիս ապահովել ինչպես անհատական, այնպես էլ բոլոր մեխանիզմների աշխատանքը միաժամանակ:<br><br>Ներքին մեխանիզացիայի ծառայություն<br><br>Առկա են.<br><br>• հակահրդեհային երկաթյա պահպանիչ /սեյֆեր/ թվով 3 հատ: Տեղադրված են բեմի նախամասում: Օգտագործվում են փափուկ դեկորացիաներ և թատերական վարագույրներ պահելու | ամիս | 4369176 | 12 | Թումանյան 54 | 12.02.2021թ. 31.12.2021թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | համար: Կառավարվում են էլեկտրոնային հեռակառավարման վահանակով: Քաշն է 13տ. Չափերը 9.0մ* 0.80մ*18մ<br>• բեմի շարժական հարթակներ,թվով 9 հատ են: Տեղադրված են բեմի մեջտեղի մասում: Չափերն են 4.80 * 1.95 մ : Ըստ ուղղահայացի աշխատում են ± 0.0 –ի համեմատ + 2.10 մ և – 2.10 մ: Աշխատում են յուրաքանչյուրը առանձին,խմբերով և բոլորը միասին: Կառավարվում են էլեկտրոնային հեռակառավարման վահանակով:<br>• հակահրդեհային կենտրոնական /1 հատ/ և կողային /2 հատ/ երկաթյա վարագույրներ: Մեկուսացնում են դահլիճը և բեմային հատվածը: Լցված են ավազով: Ունեն համապատասխանաբար 33 տ և 16 տ քաշեր: Ղեկավարվում են էլեկտրոնային հեռակառավարման վահանակով: Ունեն նաև վթարային ավտոմատ ռեժիմ:<br>• նվագախմբի շարժական հարթակ մոտ 200 ք.մ. կոնստրուկցիան իրականացված է մխոցային ձևով: Ղեկավարվում է էլեկտրոնային վահանակով,ինչպես նաև տեղային կառավարման մեկ կետով: Աշխատում է ըստ ուղղահայացի ± 0.0 նիշի նկատմամբ + 2.20 մ և – 2.20 մ նիշերով: Ունի տարբեր արագություններ:<br>• ծխատար հորաններ: Տեղադրված են տանիքի հարթության վրա: Թվով 8 հատ են: Ծառայում են հրդեհի դեպքում շինությունից ծուխը արտածծելու համար: Կառավարվում են էլեկտրոնային վահանից, հրդեհային անվտանգության սենյակի ղեկավարման վահանից, ինչպես նաև ունի տեղային կառավարում:<br>Համակարգը անհրաժեշտ է սպասարկել 01.01.2020-31.12.2020թթ.:<br><br>Ցանկացած վթարային իրավիճակի մասին կազմել գրավոր արձանագրություն և ներկայացնել Պատվիրատուին | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի
և բալետի ազգային ակադեմիական
թատրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Թումանյան 54
ՀՀ ՖՆ թիվ 1 գանձապետական
բաժանմունք
900018001306
ՀՎՀՀ 02510673
Տնօրեն՝ Հ․-Կ․ Օրբելյան
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Ավե Մար>> ՍՊԸ
Ք. Երևան, Սայաթ-Նովա 4, բն. 82
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ՀՀ 1150000316390100
ՀՎՀՀ 02554691
Տնօրեն՝ Ա. Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
« 12» փետրվարի 2021թ. կնքված
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71631100 | Թատերական բեմի մեխանիզացիայի տեխնիկական սպասարկման ծառայություն | | 364098 | 728196 | 1092294 | 1456392 | 1820490 | 2184588 | 2548686 | 2912784 | 3276882 | 3640980 | 4369176 | 4369176 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Թումանյան 54
ՀՀ ՖՆ թիվ 1 գանձապետական բաժանմունք
900018001306
ՀՎՀՀ 02510673
Տնօրեն՝ Հ.-Կ. Օրբելյան

(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Ավե Մար>> ՍՊԸ
Ք. Երևան, Սայաթ-Նովա 4, բն. 82
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ՀՀ 1150000316390100
ՀՎՀՀ 02554691
Տնօրեն՝ Ա. Խաչատրյան

(ստորագրություն) Կ.Տ